ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030
, hatsavan.kotayk@mta.gov.am

N 77
25 մայիս 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ
<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2017թվականի մայիսի 18-ի թիվ 16-Ա որոշումը:
Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 16-Ա

<<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 17.05.2017թվականի N 01/12.2/2044-17 գրությունը՝

որոշում եմ

1. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի իրականացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.
Ալվարդ Խաչատրյան-համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Մխիթար Սարգսյան-ավագանու անդամ
Սուսաննա Սահակյան-դպրոցի տնօրեն
Շուշան Պետրոսյան-բուժկետի տնօրեն
Անի Կարապետյան-համայնքապետարանի առաջատար մասնագետ
Անուշավան Խաչատրյան-համայնքի ավագանի
2.Հանձնարարել աշխատանքային խմբին՝
1) բարձրացնել համայնքի բնակչության,ուսումնական և առողջապահական հաստատություններում իրազեկվածությունն ու մասնակցությունը շրջակա միջավայրի մաքրության պահպանության գործում,
2) կազմակերպել համայքնի վարչական տարածքում ճանապարհների,ճանապարհամերձ հատվածներում կուտակված աղբի հավաքման աշխատանքները,
3) իրականացնել ամենօրյա հսկողություն շրջակա միջավայրի մաքրության պահպանման նկատմամբ:
3. Առաջարկել կազմակերպությունների տնօրեններին իրականացնելու սանիտարական մաքրման աշխատանքները իրենց կազմակերպություններին պատկանող տարածքների ինչպես նաև աջակցել համայնքի վարչական տարածքում սանիտարական մաքրման աշխատանքների իրականացմանը:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքապետարանի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:
5. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. մայիսի 18
գ.Հացավան